

Յակօբ Վրդպտ. Առաջնորդ Թէքիրտաղոյ ՌՄԷ, = 1758), որ կ'ըսէ թէ ծնողքը քահանայ ձեռնադրուելու հակառակելուն՝ հրաման կու տայ իրեն Թէքիրտաղէն մեկնելու՝ ուր որ կ'ուզէ։ Գր. Պատրիարք Պասմաճեան տուած է վկայականը, որ կը պահուի Անտոնեան Հարց Գիւանը. բնագրին վերելը Գր. Պատրիարքի կնիքը կայ, որուն քիչ ետքը նմանահանութիւնը պիտի դնեմ։ Իսկ բնագիրն հետեւեալն է.

Ի Տէր Գրիգոր վարդապետէ եւ Պատրիարքէ Կ. Պօլսոյ, յայտ լեցի ընթերցողաց դրոյս, որ վկայութեամբ Թէքիրտաղու առաջնորդ Յակօբ վարդապետին՝ սոյն աշակերտի իւրոյ Թէքիրտաղցի պաղտասարենց տիրացու Սարգսին, հրաման տուաք Յովակիմայ արքեպ. ին՝ տալ զսուրբ աստիճանն Աւագսարկաւազութեան, որ եւ ի սուրբ Գէորգեայ եկեղեցին Սամաթիայու՝ յաւուր հրեշտակապետացն տօնի՝ ընծայեցոյց զվերագրեալ տիրացու Սարգիսն յաստիճան Աւագսարկաւազութեան՝ ուխտիւ կուսակրօնութեան. յամի փրկութեան մերոյ 1771 եւ ըստ հայոց ռմի. ին ի հինգն նոյեմբերի զոր Տէր Աստուած անխախտ... պահեցէ...։ Եւ զայս վկայական գիրս ետու՝ ի ձեռս սոյն տիրացու Սարգսին...։ Գրեցաւ ի Կ. Պօլիս, ի Պատրիարքարանս Հայոց. ի Թուին Հայոց ռմի, ի նոյեմբերի ե. ին։

Սարգիս կու գայ Պօլիս 1772ին եւ Պալատու եկեղեցին Յարութիւն Արքեպ. Բասենցոյն կ'աշակերտի, անոր սարկաւազը կ'ըլլայ, եւ իրմէ կը սորվի կաթողիկէութիւնն, որուն արդէն Թէքիրտաղ հետամուտ էր։ Բասենցոյ գիտակցութեամբը տարի մը Պալատէն «Պէկողու» կ'երթեւեկէ Սարգիս հայ կաթողիկեայց փոխ-